


ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԳՐԱԼԵԻ “ՈՐԲԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ”  
ՄԱՍՆԱՃԻՎՈՒՆ

ՋՈՒՂՈՒՄԸ ԵՒ  
ՄԵՐ ՈՐԲԵՐԸ



ՀԱՌ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ  
ԳՐԱԼԵԻ “ԱԳԱՄԵԱՆ” ԹԱՏՐՈՆԻՆ ՄԵՋ  
30 ԳԻՆՏԻՖԻԿԵՐ 1920Ի ԳԻՆԵՐ

Պ. ԹԷՈՂԻԿ-Է



ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԸ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ



Կ. ԳՈՂԻԱՍ

ՏՊԱԳՐ. Կ. ՔԵՇԻՇԵԱՆ ՈՐԴԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԳԸՆՍԱԼԸՐԻ “ՈՐԲԵՐՈՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ”  
ՄԱՍՆԱՃԻՂԻՆ

ՋՈՒԼՈՒՄԸ ԵՒ  
ՄԵՐ ՈՐԲԵՐԸ



ՃԱՌ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ  
ԳԸՆՍԱԼԸՐԻ “ԱԿԱՄԵԱՆ” ԹԱՏՐՈՆԻՆ ՄԵՋ  
30 Դեկտեմբեր 1920ի զիշեր

Պ. ԹԷՈՂԻԿ - Է



ԱՄԲՈՂՋ ՀԱՍՈՅԹԸ ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ՅԱՏԿԱՅՈՒԱԾ



Կ. ՊՈՒԼԻՍ

ՏՊԱԳՐ. Կ. ՔԷՇԻՇԵԱՆ ՈՐԴԻ

Պ Ա Տ Ա Հ Ա Կ Ա Ն այցելութիւն մը՝ Իշխա-  
նաց Կղզիներու այս անդրանիկին , և  
անա՛ ձեր զիմացը կը գտնեմ՝ ինքզինքս , ո՛չ  
իրբև ատենախօս , այլ հին յիշատակներ քըր-  
քըրօղ մը՝ որ անցեալը կ'ուզէ լծօրդէլ ներ-  
կային , մօտենալ Հայութեան քիչօր այլ  
ընտրեալ մէկ հատուածին սիրտին , հաղոր-  
դըւելու համար անոր ազգատիրութեամբ :

Բայց իմ գրչի եղբայրս և ձեր հայրե-  
նակիցը , Պրն . Արշակ Ալպոյաճեան , վատ  
կացութեան մը կ'ուզէ մօտնել զիս՝ հոս  
հրաւիրելով , այսինքն բեմախօսի հանգա-  
մանք մը վերադրելով անա՛նկ մէկուն՝ որ  
Բեմը չէ ճանչցած գրէթէ : Ահա թէ ինչո՛ւ  
յանպատարաստից խօսելու այդ պատիւէն  
հրաժարած՝ ձեզի կը ներկայանամ . . . գիրով  
խօսելու անփառունակ հանգամանքով , հմա-  
յաթտօփ ընելու համար զիս հրաւիրողին հետ  
և՛ զձեզ :

Պէտք չէ շփոթել գրողը խօսողին հետ :  
Ստալինն իր գաղափարներուն և իր վերա-  
ցումներուն հետ կղզիացած կ'ապրի՝ նման  
խղունջին , և մտածումի իր պրիամակները  
կը յօնձնէ թուղթին , աշխատութեան իր  
լսամած սենեակին մէջ : Մենութիւնն այն  
գաչան է ուր ան իր մտածումներուն սերմ-  
նացանք կ'ընէ երկիւղած : Մինչ խօսողը ,  
բա՛ւն բեմբատացը , ներշնչումի աղբիւր՝ իր  
ունկնդիրներն ունի , և ամսիոնին վրայ ար-  
ձանացած , երկսեռ գլուխներու հոծոթին  
սեւեռելով իր նայուածքը , կը բանայ չըր-

---

Ազգ. Երևանական Յանձնաժողովին  
կնիքը չկրող օրինակները անվաւեր են :

---

թունքը՝ գրո՛հ տալու համար իր գաղափարներու հեղեղին : Բեմբատացն իր խօսքին յազթական զնայքը կը պարտի այն լարուած և հիացիկ ակնարկներուն մանաւանդ՝ որոնք իր վրայ են կեդրոնացած , և ծափերը զորս կը խէ՛ռնկնող իրնեքէն՝ կ' պարզեւեն իրեն խանդ ու եռանդ : Ստոր հակառակ , զրողը միակ բանը որ ունի՝ թուղթի փառքն է . աւելի շիտակ պիտի ըլլար ըսել՝ թուղթէ փառքը :

Այդ ճղճիմ՝ այդ սլորմուկ բեռն ահա՛ մասներուս մէջ . ձեզի կը ներկայանամ՝ ճառելու համար նիւթի մը վրայ՝ որ գուցէ հե՛շտ ալ պիտի չհնչէ ձեր ականջներուն : Եւ ես , զրկուած հայ հռետորին պէս ձեր դէմքին նայելէ , իմ՝ ներշնչումներս պիտի վնասեմ՝ սուղուելով ծաւրերուն մէջ մօտաւ որ անցեալին :



Ճամբորդ մըն եմ որ կու գամ Տաւրոսի փէշերէն , աքտորի տարիները բոլորած ըլլալով փապուղիներու մէջ , վարելով լեռնցի մարդու կեանք մը անհամ՝ անհրապոյր , սիրելիներէ և սրտակիցներէ փարսախներս՝ վհուտ , սարկական աշխատութեան մը անխնարուն լծուած , իր ճանճրայթին , կարօտին ու վիշտերուն ու ճախարակը դարձնելով , կիլիկեան Աշխարհի այդ անանուն բարձանցը վրայ՝ որոնց վարերէն կը շարունակէր անցնիլ շարանք Յեղիս սարապիր գաւակներուն , դէպ ՚ի Այրան , Ինթիլիի , Իւրաշիէ և Մէսքէնէ երթալ հեծելու և հիւճելու համար չարաչար . . . :

Ճամբորդ մըն եմ որ տեսու այդ ճամ-

բուն երկայնքին՝ (զոր Գերմանին արկածախնդիր թաթը կը պեղէր , երկաթէ անվերջ գուգահեռականը զետեղելու և Թուրքին յազթանակը ապահովելու վարկպարագի յոյսով) , հարիւրներով ու հազարներով Հայեր՝ որոնք կռուեցան հողին ու քարին դէմ , թիպարաներու հանգուռակ : Անտուաղ , անպատսպար ու կիսամերկ , տաճկահայ կարաւաններ , հեազհեաէ նօսրացած շարքերով , ճապաղեցան այդ ուղիներուն վրայ , և ամիսներս՝ վոտքը ձեռքը պագին Ալմանին ու Միւսլիմանին , չոր գլուխուն համար զնելիք տեղ մը և պուլկուրի փիրաֆ մը ապահովելու անձուկով : Ու մենէ եղան որ քուեցան կրկին , տարուեցան անբնակ և անջրգի տեղուանք , սոված անատուններու պէս իրարու մեռել կը՛նելու . . . :

Ճամբորդ մըն եմ որ ծայրագոյն թշուառութեան թափթփուքները տեսու , որ Դասակեան Սուրին մշտակայ ճօճումը նշմարեց իր գլխուն վերև , որ զազթականութեան անաորութիւնը չափեց և որ շատ հեղ Հայու ոսկորներ նշմարեց , ծոցձորներու և ձորերու խորքին :

Ճամբորդ մըն եմ որ տաճկացոյ Հայուհիներու հանգիպեցաւ , անբանացած հայ որբերու ալ , որոնք , Հնայելով ամենափոխտ արգելքին , Հայու գութերնին ցոյց տուին կրկին , սովանար վիճակս ամօքելու համար :

Ճամբորդ մըն եմ , վերջապէս , զոր «եղին ՚ի գիի ներքնումն ի խաւարի և ՚ի ստուերս մահու» , և Բրիտտոսի բարեկամին նման որ իր պատանքը պատուելէն վերջ խնդալը մտցաւ՝ սրտովին բաղձաց սակայն

ժպիտ անոնեղ վերապրող Հայութեան դէմ-  
քին վրայ . . . :

Աղէտակոծ Յեղիս քաջածնեակուն և մա-  
նաւանդ անոր ողջ մնացած լեկորներուն  
չ՛ուրջ է որ պիտի դէգերիմ ես այս գիշեր,  
ցոյց տալու համար ձեզի պատկերներ՝ գորո  
գծեցին անողոք մասները թուրք Բանակա-  
լուծեան, Անտաօլուի ծայրածաւուր կտաւին  
վրայ, թուրքով ու հայհուհո՛վ գծեցին, բի-  
բով ու արիւնս՛ով գծեցին, անքորով ու  
քաղցո՛վ գծեցին, սրպէս զի օր մը, այդ  
ոճիրներուն զինով, ախրացած ըլլային իրենց  
երազած ձէննէթին . . . :

Մուշէն մինչև Բաղէշ, Խոյժէն մինչև  
Բանաշէն, Սվաղէն մինչև Տարէնտէ, Սու-  
շէնիբէն մինչև Թօզաթ, Կարինէն մինչև  
Նաոնն, Երզնկայէն Ազիզիէ, Չօկլաճազէն  
Հլուսնի Մանսուր, Պոֆրայէն ձանիկ, Խօզա-  
թէն Խարբերդ, Գալէճիբէն Կէմէրէք, Թաշ-  
քէօփրիւէն Չանղըրի, Ագշէնիբէն Ըլըրն,  
Սէօլէզէն Չէնկիլէք, Եալովայէն Օվաճըզ,  
Էնկիւրին ու Խայսերին, Փոքր Ասիան ու  
Սիւտանն ամբողջ, գաւառի մեր եզրայր-  
ներն ու քոյրերը ասկէ հինգ տարի տաջ  
նշաւակ դարձան իրենց հարեւաններուն վայ-  
րագութեանց, և ստիպուեցան վրայ տալ  
մարդկային անրուսաբարելի այն երբորդու-  
թիւնը որ պարտուած է սա նուիրական բա-  
ւերուն մէջ. — Պատիւ, Ինչք և Կեանք :

Մահիկը պաշտօղներուն դարաւոր երա՛զն  
էր որ կ'իբրագոյժուէր՝ Խաչը պաշտօղներուն  
սպաւստուռ անճիտութիւնով : Այդ Խաչը պաշ-  
տօղները, և շատ պաշտօնուն համար կար-  
ծես՝ զայն շատ շարկողները մե՛նք էինք :  
Ամէնէն կորիճները, ամէնէն յողթանողամ-

ները, ամէնէն խելացիները մեր եզրայրե-  
րուն դացին տուայտիլ Տաճկին կառուցած  
գնդաններուն մէջ : Եղան որ չլիճաներ ճանչ-  
ցան, ուրիշներ եաթաղան, և շատեր՝ կա-  
խաղան : Արու սերունդին բռնադողթին ու  
բնաջնջումին կը յաջորդէր երկարաճգուած  
հողեվարքը մեր քոյրերուն և անոնց սիրա-  
սուն զաւակներուն : Իրենց հայրենի կառու-  
րէն տարապարտուց վճատուած, այդ եզկե-  
լիներուն կարաւանները տարողնեցան ան-  
տոնակոխ ճամբաներուն վրայ Արհաւիրքին  
որ Պօղանթիէն կ'երկարէր մինչև Կիւլէկ-Պօ-  
ղազի, Նիսիպիսէն մինչև Միջագետք, Գան-  
լը Կէշիտէն Գանլը Տէրտ, Չէրչի Տէրէէն  
Առնափուռ Խան, Մալաթիոյ ու Սվաղի  
սպանդանոցները բոլոր, նաև Պէլլանի ձորն  
ու բուստեսիլ, ուր անոնք ճանչցան իրենց  
յեղկին մեծ Գողգոթան : Գողցը, բացօղեայ  
կեանքը, Թափառական Հրեայի անվերջ  
ուղեւորութիւն և կիրքերու թափով անզի  
ունեցող առեւանդումներ՝ հալարներ, հա-  
րիւր հաղարներ զեղչեցին կենդանութեամբ  
ու խեղճութեամբ շաղուրած այդ կարա-  
ւաններուն շարքերէն : Երջանիկ թուշուններ  
ու գողաններ սրոնք իրենց խնջոյքը սար-  
քեցին՝ անոնց զիականերուն յղվութեանը  
մէջ . . . :



Ինչ էր սանդարամետական այդ արար-  
քին պատճառը, աշխարհի տարեգրութիւն-  
ներուն մէջ իր նախընթացը չունեցող այդ  
զուլումին շարժառիթը :

. . . Անէ՛ծք այն օրին՝ երբ իթիթհատ իր  
թաթիերուն մէջ կ'առնէր Փաթիիսի սերունդին  
ճակատագիրը վարելու գործը : Անիկա ազ-

գայնամուղ եռանդէ մը փրփրած, պահուր-տեցաւ Համիլտամութեան բանդագուշանքին մէջ և ուզեց թեւատել իր շուրջի ոչ-խղամ տարրերէն Հա՛յը մանաւանդ զոր օժտուած կը տեսնէր յառաջդիմութեան ու քաղաքա-կրթութեան բոլոր այն ձիւրքերով որոնց նը-շնջն իսկ չի կար իրենց ազգակիցներուն քով :

Հօր Խաւարին և անտրամարան խենթ Հովին պայքա՛րն էր ատելիկ, մղուած՝ լապ-տերի փեղկերէ զեռ ևւս զուրկ Լոյսին զէ՛մ որ ստեղծագործ խե՛ղքն էր Հայուն : Նախա-փորձը կը տրուէր 909ի կրիկեան Եղեռնով՝ զոր հին բռնաւորի մը, տակաւին ոչ-գահաւ-զուրկ Համիտի վերագրել զո՛ւր փորձեց հա-մանուն ջալիրն Իթթիհատ : Եւ երբ Համաշ-խարհիկ Պատերազմը պայթեցաւ և այս եր-կիրը մնաց զերձ՝ բողոքարկու օտար միջա-մառութենէ, Թալաթի «լուսնէթ» կառավարու-թիւնն ապերառան բ՛նամարեց իր յօրինած ստեղծած տուամը՝ պիղծ ու մուսլ վարա-զոյրներով :

Թրքահայութիւնը մարմնացնող դասա-կարգային բոլոր շերտաւորումներուն մէջէն՝ հոգեւորականներ, կուսակցական դրօշի տակ մտնողներ ու կրթական գործիչներ ամէնէն առաջ տարկայ դարձան Թուրք Բռնակա-լութեան վարերային ուշադրութեան : Նախ և առաջ հարկ անհրաժեշտ էր մէջտեղէն վերցնել զանոնք, հայ ժողովրդեան այդ սահ-վիրաները, Հաւատքի, Խելքի ու Խօսքի այդ թունտ մարդպետները : Մնացորդին զօրձը մաքրել՝ կը դիւրանար ինքնին, քանի որ գլուխ և առաջնորդ չիկային մէջտեղ :

Այնպէ՛ս ալ եղաւ 915ի դարնան, երբ

Թուրքիա իր զիւանադիտական յարարերու-թիւնները խղած և հաղորդակցութիւնները դադրեցուցած՝ թեւերը կը սոթթէր, և Հայ Ազգն իր հոգեւոր պետին հետ կը յանձնուէր փչող չորս հովերուն խաղալիք : — Հօրիզոնը մէկէ՛ն ի մէկ կ'ամպտէր : Կեղբոնէն մինչեւ դաւառ, հոս, հոն, ամենուրե՛ք, մի՛ մրայն յայտնի ազգայիններու համար կը կազմուէին «Տիվանը Հարպը Էօրֆի» ներ՝ իբր դասա-սրահ, ի՞նչ կ'ըսեմ, իբր հուստաքննական ատեան ծառայող : Հո՛ր էր որ բազմեցան Օրէնքի Գիրքը նո՛յն իսկ թղթատել չգիտ-ցող զապրքալներ, խաքի հազուստով, մա-զոտ գզակով, սեւ մոյկերով, աչքերնուն մէջ կայծ, կուշտերնին «պուռուհինկ» և սիրտեր-նին դժոխք, չարչարանքներուն և մահերուն ամէնէն սարսափելիները մեծաբերու համար հայ կղերին և հայ վարժապետին, հայ վա-ճառականին ու հայ մտաւորականին, հայ գործիչին և հայ ուսումնականին : Ամէնէն կարձ ու դիւրին միջոցն ա՛յդ էր անս . ըր-ծեղ Հայկական ակնճերակալի եւ ակնխոյանակի Հարցը՝ Հայուն արագ քնուցելուով :

Ու կ'սկսէր գաղափարասփուռ խօլ դոր-ժուհեութիւնը՝ մեծ մասամբ հրէտգարձ Աէ-լանիկցիներէ և ծայրայեղ ազգայնամոլներէ կազմուած խուճիք մը — շատը արաբխով ու քիսկիկով — վաղուց մտած Union et Progrèsի գարշածուի դրօշին տակ : — Պէ-հաէտտին Շաքիր շողեպլինդ դաւառ մեկնած էր արդէն՝ ոճրամէտ միտքերը հատունցնելու, մինչ հոս կը սաղմուէր «Թէշքիլաթը մախ-սուէն» ն որ ո՛չ այլ ինչ էր՝ բայց իթէ պատ-րաստութիւն հրոսօխումբերու, անդամա-

կցութեամբ մութ անցեալ ունեցող արիւն-  
կզակ Տէրէպէյիներու, էֆէներու և Ֆէ-  
տալիներու : — Գիրի կ'առնուէր յետոյ անա-  
ւոր հրահանգը, հետզհետէ դադտնարար հա-  
զորդուելով գաւառական ամէն անկիւն :  
Ամբօթազար քարտիւները կը շարունակուէին  
Չարածողովներու կողմէ, իրենց յարմարա-  
դոյն կեդրոնատեղի ունենալով քաղաքներու  
անխուսափելի «քրիւպ»ները, նոյն իսկ  
Մէսօիաններն ու Մէարէսէները : Բնագոյներ  
կը գրգռուէին շարունակ, խղճմտանքներ  
կը թմրէին մե'ոօրէն, խակչի' ու լուսնագ կը  
սրուէին, փամփոշաներու տուտ համբանքը  
կար ամէ'ն տեղ, մինչ «սաչըպօղուզ»ներ  
մուտ կը գործէին երկիւզած՝ նոյն դրօշին  
տակ : Աղօթատեղիներու բակերուն մէջ շչուկ-  
ներ, շուկան, տուներնին, «հարէմ»ներնուն  
ու «ճարիէ»ներնուն հետ, ամէնու'ն հետ որ  
խլամ էին և ամէ'ն տեղեր որ տաճկընց,  
խօսուած ու լսուած էր վերին պատգամը,  
հոչակումը ձիհասին, այսինքն պարզումը  
Մարգարէին «մուազզէզ» դրօշին՝ որ կը տրա-  
մադրէր անպայման քալել անհաւատներուն  
դէմ, Փէյղամպէրն ուրացող իրենց հարեւան-  
ներուն դէմ, հա'յ քրիտոնեւաններուն դէմ,  
որպէս զի ի հարկին հաւատափոխ կամ կե-  
նսողբաւ ընէին դանոնք և տիրանային անոնց  
մալին ու միւլքին :

Քալեցին ամէնքնին մէկ, հալւորէն մին-  
չեւ տղամարդ՝ քալեցին անոնք մեզի դէմ :  
Չբրածնէ'ն չմնաց : Դարտըկուեցան հայ եր-  
դիքները, հայ մարագները, հայ գոմերը,  
հայ ազարակի'երը, հայ մառանները, հայ  
մատուռներն ու վանքերը, հայ դպրոցն'ըը  
մանաւանդ, շնչաւորէն մինչեւ անշունչ :

կեղտի ու ցեխի մէջ թաթխելով Հայուն դա-  
բաւոր պատիւը :

Մեր հարսերէն ամէնէն տեսքոտները  
զարդ եղան «հարէմ»ներու, այլերը՝ կծիկ



Բնիկ Մարգուանցի Օր. Մելիսա \*\*\* եան հարուս  
Հայուին որ Սամսոնէն Հայէպ սարագիր՝ կը մուրայ...  
կծիկ բրածեծ, դաշոյնին տակ, հրազէնին  
գիմաց և կառափնասօին վրայ քաւելով չգոր-

ծած մեղքերնին, երախաներ ողջ ողջ գետա-  
մոյն, խեղդամահ և հրկիզուած: Սողոմ Գո-  
մո՛ր ամբողջ Անատոլուն:

Լեզո՛ւ ունենային և պատմէին ձեզի  
Պոնտոսի ալիքները, Կիրասոնէն մինչեւ Տրա-  
պիզոն, նաև Հայաշխարհի գետերն ու առու-  
ները բոլոր, թէ քանին: Ի թաղուեցան անոնց  
լոյժ տարածութեանը մէջ, թեւերնին ճիւղեր-  
նին ջարդուած, իրենց արիւնը խառնելով  
փախչող ծփանքներուն:

Գացէ՛ք, զոր օրինակ Մամախա-  
թուն-Թերջան, տեսնելու համար այն փոսը  
լոյնապեղ՝ որուն մէջ 500 տղաք իրարու  
վրայ լեցուեցան և անոնց ողջ ողջ թաղումը  
կտարեցին Փէյղամպէրին չնորձունա՛կ սիրա-  
կանները՝ մեծով պղտիկով: Անդին հայ դիակի-  
ներով առլի Եփրատի ափունքին՝ Մէմուռհ  
մըն էր որ ընտանեկան ձաշ մը սարքեց,  
վայելելու համար նախճիրի այդ տեսարանը  
ներոնհան: Ուրիշ հրէշ մը, աւելի գթո՛տ՝  
Հայ Տառապանքին հանդէպ, օր մը կառքով  
երբ Քէմախի իր ապարանքը կ'երթար, գե-  
տեզրը խճողում մը կը նշմարէ: Ե՛՛թը հա-  
րիւր ծնողազուրկ մանուկներ էին՝ ձայն ձայ-  
նի տուած ձուարով, քարէն, հողէն, ջուրէն,  
ծառէն ու երկինքէն օգնութիւն հայցելով:  
Ի՛նչ պիտի ըլլար այդ խեղճերուն ձակատա-  
զիրը: «Կիւնահ տըրլար» կը բացազանչէ ան  
իր փառաշուք կառքին մէջէն և ամէնքը մէկ  
գետ նետել կու տայ...:

Հազարէն մէկ երկուք՝ ամէնէն պղտիկ  
և ա՛նչան գրուագներն են ասոնք այն եղի-  
բապատում անցքերուն, որոնց ընթացքին՝  
գաւառի ամբողջ Հայութիւնը տքաց թու-  
րանեան անեղ անուրին տակ, և Արհաւիր-

քէն խելայիլ՝ քթան մազով մեր մամիկները  
խենթեցան, մեր հարսերը արիւններ փըս-  
խեցին ու երախաներ կաթի տեղը աղի ար-  
ցունք ծծեցին: Ու Թուրքը ինդաց ա՛յնքան  
չատ, որքան պէտք պիտի ունենար վերջէն  
լալու: Գոնէ այսպէ՛ս կը տրամաբանէր տա-  
ւապող ողջ Հայութիւնը՝ մեղմելու համար  
իր կացութիւնն անմխիթար:

Դարձաւ տարին, կը մտնէինք 916ը:  
Հեռուն, վրթխարի թիւի մը կը յանդէին  
բեկորները տարազիր Հայութեան որ տա-  
րածուած էր Տէր Զօրի անհուն աւազուտքին  
մէջ: Որպէս զի աղէտն իր լրումին հասնէր,  
պէտք էր լուսնար Օգոստոս 25ն ալ: Վեր-  
ջին վարագոյրն էր ատ՝ բեմազրուող տա-  
մին, զանգուածային բնաջնջումովը վաթ-  
տուն հաղար անպատասպար քաղցած Հայե-  
րու: Մուրաթ և Խապուր գետերը գարնա-  
նազարը մակընթացութիւն մը կ'սխլէին՝  
դիակներու հեղեղներէ յղփացած: Հազար-  
ներ կորան հող հուրով և սուրով, բայց  
մանաւանդ վառօդով ու քարիւղով: Ինը  
հազար մանուկներ— յերկեմենից և ի խո-  
նարհ—ձենձերուեցան խոտի դէզերու վրայ:  
Այլուր՝ աղիւններու պէս ձեռքէ ձեռք՝ Եփ-  
րատ ձգուեցան: Հեռուն, Շէտտատիէի ան-  
ձաւներուն ու խորխորաաներուն մէջ՝ նա-  
բուզոթմոստորեան փուռեր ու խարոյկներ  
ձեւացան, որոնց մէջ Սեղաքա-Միտաքներու  
տեղ՝ Սիրան. Արաքսներ ամխացան: (Ը՛ր էիր,  
Դաւիթ, որ ալելու թարգմանէիր անոնց գո-  
չերը կողկողաղին) Աւելի ներսերը, Սաֆայի  
և Հասիճէի կոտորածները գիր ու պատմա-  
գիր չունին: Կիներու որովայններ պատու-  
լով՝ փորձաքներու մէջ սակի փնտուղ մար-

դակերպ դադաններ դործի վրայ էին, վո՛հ մակ վո՛հմակ սունածայն . . . :

Եւ դու, Իսրայէլի ազգին ծանօթ հի՛ն Երիքով, դադրէ՛ անապատներուդ անէծքը որոճալէ, քանի Տէրի-Չօր մը կայ հիմա՛ որուն աւաղուտ տափաստանները նոր կարմիր Ծով դարձան, և Մովսէս մը չելաւ մեր ժողովուրդը ողջ անցունող անոր մէջէն . . . :

Քրիստոնեայ Հայաստանի պարտեալ յաղթութիւնն էր այս՝ ընդդէմ մահմէտական կրօնի որ կ'ուզէր «կեալուր էրմէնի» մը չթողուլ իր հողին վրայ :

Աւերի՛ն կար. հայրենի շիրիմներ տապալեցան իրենց պատուանդաններէն վար և իրենց վրայի մետրոպեան տառերը քերզուեցան : Ամէլէ թապուրին կրեց զանոնք, ու դօնազներու բակեր և ճեմիչներ այդ սուրբ մարմարներով յատակուեցան, իբր գերագոյն նախատինք Քրիստոնէութեան : Այդ մը՛ Լենոյն խուժանն էր որ մեր խաչերը, մասունքներն ու աւետարանները խորաններու աստիճաններէն վար աճնելով՝ նետած էր աղբանոցներ ու կոյսւղիներ, և սուքերուն ասկ առաթուր՝ պօռացած Հայերուս երեսին. «Եկէ՛ք ազօթել հիմա, Հազրէթը Իսայի ուխտեալ հետեւողներ. անաւասի՛կ ձեր Աստուածն ու որբութիւնները՝ մեր կրուկներուն ասկ . . . » :

Նոր յայտնաւուրքներ, բազմահատոր նոր՝ Վարք-Սրբոցներ կարելի է լեցնել չարչարանքի այն դրուագներով՝ զոր մերոնք ապրեցան, ամի՛ններ անվերջ արիւնէ արցունք թափելով, եղբայրանալով ցուրտին ու քաղցին հետ, մերկութեան ու չարքաչութեան հետ, լեռներու կողին կամ դաշ-

տերու ջխջխանքին լարուած փցուն վրաններու տակ՝ յաճախ օրհասական, այլուր աղաբերքի ցաւեր քաշելով, իրենց մտերները թողլով անթաղ, ողջերն ալ անխնամ, խոտ ու կեղե՛ւ կրծելով և անձկազին սպասելով երջանիկ, բարերար ու փրկաւէտ մահուան որ կ'ուշանար ու կ'ուշանար :

Ասպետական ցեղ մըն էր ան, գաւտուի տոկուն և հարազատ Հայք, որուն կը վիճակուէր տեղահան ըլլալ բունօրէն, վաշկատուն թափառիլ քաղաքէ քաղաք, լեռնէ լեռ, մագլցիլ զառիվերներ ուր անձնուր քայլի՛ Սոսկումը դարանակալ կ'սպասէ, աքսորը ճանչնալ իր է՛ն անաւոր փուլերուն մէջ և սաւապէ՛ս արժեցնել Սաղմոսերգուն խօսքը՝ որ գուցէ ջուրի ձայն գայ շատերու ականջին. — «Սուրէն մոռնաղները Սովէն մեռնողներէն երջանիկ էին . . . » :

Քաղաքակիրթ աշխարհի առջև Հայք լիուրի վճարած եղաւ այսպէս իր արիւնի պարտքը, զո՛հ տալով առաւել քան մէկ միլիոն հոգի, յագեցուցած ըլլալու համար դժոխային ծարաւը Մօնիօյներու անողոք Մողոքին : Եւ մեր հարեւանները երբ ծափ ու դափ կը զարնէին և երանութենէ երանութիւն երբ կը տարուբերուէին, կը կարծէին անչուշտ թէ մուխերնիս մարած էր ի սպառ և ա՛լ սոքի ելլելիք չունէինք, թէ իրե՛նցն էր այլեւս երկիրը դրախտապար՛ուր երմեկի ֆիլիստին տե՛ղ չունէր, և մինաբէններու կատարին՝ աշեմը պիտի փայլէր միայն՝ ասամզուն երկինքն ՚ի վեր . . . :

Թուրքին լուծը քաշո՛ղը գիտէ, տաւապանքն իր միտին վրայ ու սոկորին մէջ զգացո՞ղը գիտէ, թէ ի՛նչ սիրտով և ի՛նչ շրթունքով պէտք է արտասանել մեր Սուրբ Գիրքին սա հատուածը. — «Ով վրէժխն»

դրութեանց Աստուածը, յայտնուէ՛ . ելի՛ր՝  
ամբարտաւաններուն հասուցում՝ ընելու» :

Հայահարած այդ խոժանէն ո՛չ որ խոր-  
հեցաւ անշուշտ, թէ տապարի այն հարուած-  
ները որոնք իջան Հայութեան ծառին վրայ,  
ուրիշ դեր չխաղացին, բայց եթէ յօտել ու  
պատուաստել (թէ և բրտօրէն անխնայ) նո՛յն  
ծառը դարաւոր: Անոր բունին քովտանքէն  
անա՛ նոր բարունակներ են շաքիւր, թէ և  
ոսին, ազագուն, բայց կխնայն:

Ջարդուսղ Հայութեան զաւակներն են  
ատոնք, ՄԵՐ ՈՐԲԵՐԸ մատաղատունչ,  
Ջուլումի ծնունդ բոլորն ալ, անո՛նք որ  
իրը Հայ Քրիստոնեայ՝ տառապանքի մկր-  
տութիւնն էին ճանչցած և ապրած լացով  
ու քաղցով: Անտառներու մէջ, պախալէժ  
անդունդներու վերև, գետերու ափունքին՝  
անոնք զեզերած էին, ամառ ձմեռ բոկոտն  
ու կիսամերկ արեւներէն էրած մրկած, ուղ-  
տապանի օգնական ըլլալով Չէչէններու  
հայրենիքը, անդին՝ էջրափներու տուն՝  
ծառայ, այլուր՝ արաք վրաններու պահա-  
պան, պոտոտ մը չոր հացի փոխարէն՝ զոր  
իրենց Ազան կամ Էֆէնտին պիտի նետէր  
առջեւնին, գրաստունակ դատանքնին աւար-  
տելէ վերջ:



Ա՛հ, մե՛ր որբերը, հա՛յ որբերը, Մեծ  
Փոթորիկէն, Տաճկաստանի Զրհեղեղէն վի-  
բապորդ այդ Նոյնա՛ն Թունիկները, անո՛նք  
որոնց այբերը յողնեցան երկինք նայելէն՝  
տեսնելու յոյսով ծիրանի գօտին և աւետա-  
ւոր ձիթէնին՝ տղաւնի մը կտուցին...:

Մե՛ր որբերը, Հա՛յ որբերը, անոնք որ  
Պարզև էին ու Բէրթէվ կոչուեցան, Լուսիա

էին ու Փաթմա եղան, Հայկ էին ու Փայրգ-  
եղան, Արտաշ էին ու Բէշատ եղան, այսին-  
քըն հայտններու մէջ կըլտա էին ու նա՛մ  
դարձան Տաճիկներու ձեռք, և գունդա-  
դունդ դացին լեցուիլ կը քանկանէներու մէջ,  
«Ելի՛ք պէ՛տին հեռ «պիտիլլահի» սերտելու:

Մե՛ր որբերը հա՛յ որբերը, անոնք որ  
յուզումով ու դողդոջուն ոտքերով անցան  
փլած հայ ժամերու առջեւէն, ուր ատնօք  
Տէր-Պապան լիազարդութիւն ամենեցուն»ը  
կ'օրհնեղէր, և իրենց անկողիններուն մէջ,  
վերածնունդներուն տակէն չզաղբեցան երեսնին  
խաչակնքելէ, իրենց ճակտին քուռած սրբ-  
բալոյս Միւռնը վերջիչելով...:

Մե՛ր որբերը, հա՛յ որբերը, անոնք որ  
քանի մը տարի առաջ, ձմեռ գիշերներ,  
բուխերիկին դիմաց, կ'երթային թառիկ հա-  
նիին ծունկերուն, հէքիաթ մտիկ ընելու,  
յիտոյ նետուեցան միֆիկալ-օրջերու մէջ՝ լըր-  
բութեան դատնիմացքը մորսուքանքով բա-  
լորելու...:

Մե՛ր որբերը, հա՛յ որբերը, անոնք որ  
քարէ բարձ ունեցան յաճախ և գոմէշի  
ծածկոցներ՝ իրը վերձակ, ժանկութիւննին  
բեհեղէ խանձարուրներու մէջ՝ անուշ քնքով  
օրօրներով խուշ-քուն մրտիտողները բոլոր:

Մե՛ր որբերը, հա՛յ որբերը, անոնք որ  
կորուսած եղբայրնին և ատուանդ քոյրերնին  
օրերով երազեցին ու ոգացին, մ'ինչ, իրենց  
պտըլիկ խելապատակներուն մէջ կերպով  
մը չկրցան սեղմեցնել թէ կեանքի ու միջա-  
վայրի ի՛նչ սահմակեցուցիչ փոփոխութիւն  
էր տեղի ունեցածը:

Մե՛ր որբերը, հա՛յ որբերը, անոնք որ  
հէլալ կաթ էին ծծած, մայրիկի քաղցր համ-  
բոյրներ վայելած, գիրկէ գիրկ խլուած, և

հիւնա, բունազիրիկ թռչնիկներու նման կը թռածէին անձանօթ հորիզոններ, անիծելով իրենց յոգնաբեկ տոտիկներուն համար գտնուած այն թառը՝ որ երկաթի պողու-թիւն մը ունէր:

Մեր որբերը, հայ որբերը, անոնք որ արտրի առաջին կարաւաններուն խառնուած ատեննին՝ յաճախ վար կ'իջնէին սայլերէ, և դաշտերու մէջ մոլորուն, այբբենարան ու «Օխածան» կը կարդային հեւ ի հեւ, աշխնիկ կ'ընդատացիկն դեպ ի մասն՝ խեղց դպրոցի դասերով...:

Վերապրող այդ խլեակները մեծցան ահա հեթանոս միջնորդրտի մը մէջ՝ որ ուրացումն իսկ էր Հայուն բոլոր որբութիւններուն:

Իրենց մաքրակենցաղ մանկութեան յիշատակները խաթարուեցան՝ ի տես այն անլուր անբարոյութեան որ հրեշտակի իրենց զէմքը ծածածուեց: Կարմրելու առաքինութիւնը զոր օրօրոյէն ստացեր էին՝ վրայ տուին հետզհետէ, ընկերակցութեանը մէջ հարեւան լակտոններու որոնք մարմնացումն էին անպատկառութեան ու սրիկայութեան: Եւ այդ տարաբախտ Հայորդիները հեծեցին՝ օտարութեան գիրկը յանկարծ թաւազդոր, վերակոչելով շարունակ ուղիներն իրենց սիրելիներուն, իրենց ծնողքին, իրենց քեռիներուն, իրենց հօրքոյրներուն ու մօրքոյրներուն, իրենց բոլոր մեծերուն՝ որոնք ապրելոյցեր էին գիրենք ատեսօք՝ անուշ աղապատանքով մը:



Բայց պատուհաս մը, նոյն իսկ երկնաւոր թագաւորէն եթէ գայ, իր վախճանն ունի: Կ'ընդհատուէր յանկարծ ընդհանուր պատանդովը. թնդանօթները չէին գոռար,

Փօլխը չէր հրամայեր, ժանտարման չէր քրփրեր ու խարաղանը չէր ճօճեր Հայուն վրայ, վասն զի Մեծ Զինադադարն էր կնքուածը, երեւութապէս փրկարար հանգրուանը մնացորդ Հայութեան: Ու Բունակայութիւնն օրհասականի իր հանդիւնները կ'արձակէր, մինչ թե ու թուիչ կ'առնէին հողիներն անոնց որ ջուրի պէս ծարուրյեր էին Ազա-տութիւնը:



Տարալի Հայուկին իր գաւկին ու բեռանը հետ

Հայութեան մտայամած հորիզոնէն վեհերոտ լոյս մը կը ծաթէր հիմա: Փանօք Նախախնամանոյիս որուն գոյուրխուն աշխիսն ժրխտոյնեւ էին եղած...:

Եւ Անառաջութի խորերէն, խափաներու ետեւէն, թուրք որբանոցներու որջերէն, Միջագետքի անապատներէն, սարերէն ու ձորերէն, նկուզներէն ու զուխներէն կը սողուկէր ձղձղուած բանակը թափառայած Հայութեան. — Խաւարի բնակչութիւն մը ամբողջ, արցունքով ու ողբով սնած:

Վերապրող Հայութիւնը վերստին կուրաւան կազմած՝ կը խուժէր դէպ ի հայրենի գուառ, իր քանդուած օճախը վերականդնելու: Նո՛ր գողթ, ներդա՛ղթ, իրր թէ՛ դէպ ի վերջնական փրկութիւն՝ նո՛ր քաջափոխ:

Ուրիշ կարաւաններ մեծէ ու պաշտպանէ զուրկ երկսեռ մանուկներու երամներ, ուղեկորոյց ու քաջամուրթ, կը դիմէին իրենց համար կարծեցեալ «Աւետեաց Երկիր»ը, Սթանպօլ, ուր երջանիկ ու կարեկցող Հայութիւն մը կար՝ իր հեռաւոր կորուստները համբող եւ սղջերը ասպնջականող:

Որքանոց որքանոցի ետեւէ բացուեցան, ֆեւքեր ու գաղթականի կայաններ հաստատուեցան մայրաքաղաքիս բոլոր արուարձաններուն մէջ՝ ամբող թշուառութիւնն ամուքելու սիրացաւ վերարերումով մը:

Չենէ քանիներուն արուեցաւ սակայն երթալ տեմնել խառնաղանձն այն պզտիկներուն՝ որոնք յողնարեկ գառնուկներու նման նաւերէ ու վակօններէ դուրս կը թափուէին պատառտուն զգեստներով, աղախ ու կեղտի մէջ լողալով, ոջիլներով ու վէրքերով լեցուած, իրենց երեսներուն խնձորները դեղնած, մինիկի թաթիկներնին կոշկոտ և ոտքերնին սուզուած աւիտի հինուսին անսահման կօշիկներու մէջ, չհամարձակելով նայիլ իրենց շուրջը խոնուող բազմութեան որ աղւոր ու մաքուր էր հագուեր:

Թլփատեալ Ապաուլլահներու քով կային Արուսեակներ որոնք հռակներու կապոյան ունէին իրենց թուշին և այտերուն վրայ: Մեծամասնութեամբ, անոնք մուցիր էին մայրենի լեզուներն և «ուլան Ահմէտ» կամ «դրդ Ատիլէ» կը ձայնէին իրարու: Աղջիկ-

ներէն կային՝ որ հարօնանալու տարիքը թեւակոխած և կուրծքերնին քուրջերու պէս կախ, անուանապէ՛ս էին կոյս, ա՛յնքան կանուխէն և անդթօրէն պտտարագում ըլլալով թուրանեան կիրքերու բազի՛ւն վրայ: Մանչերէն կային որ պեքեւեղանին մրտա՛ դատապարտուեր էին չկամութեամբ շողաչըտիլ Էշրաֆներու ցօփ աղախի՛ններուն հետ, ա՛յդքան միամիտ ու մատղաշ տարիքունն մէջ հեղելու համար չնական այրու բենքը Տուփանքի լեզուին:

Լեզէո՛ն կը կազմէր թիւը այդ անմեղ մեղաւորներուն որոնք Թուրքերու լուծին տակ իրենց մրգուզ գոյութիւնը քաշկուակեր էին ամիսներով և զոց սորվեր անտալօր սաղմոսերգութիւնը Դոնիւքին, որ հայհոյանքով կ'սկէր, խայտառակութեամբ վերջու նալու համար:

Այդ էյրաւնընկներուն մէջ, նկարագիրով կրակուրոց հայ մանուկն՝ իբրեւ սաստ ու պատիժ՝ իր ականջները լեցուցեր էր իսլնզըր ֆեափի՛ի պէս զգուսկան կոչականներով զոր Միւտիւր Պէյը կամ Մուալլիմէ Հանըմ էֆէնտին գիտէր յեղյեղել ի հարկին, խորապէս ձանկուտած ըլլալու համար արժանապատուութիւնը՝ ծնունդով հա՛յ սրբուկին:

Ապականութեան խորխորատը ձգուած և սողոսկելով հոնկէ դուրս ելած մեր սիրտին այդ հատորնե՛րն Լին անա որ Չինասդադարի վաղորդայնին եկան լճանալ Սթանպօլի սալայատակներուն վրայ, իրենց վրշտաչարչար կեանքին համայնապատկերը պտրդելու Պօլտահայերուս աչքերուն:

Հիւկոյի խօսքը կը յիշեմ հիմա, Թըշուստներու հեղինակին անաւոր խօսքը,

որուն մէջ կարծես խտացնել ուղած է ան՝  
 տմբողջ իր վէպը . Ո՞ր որ Մարտոս քառա-  
 նուրբները սեւած է, բաւ մը չէ սեւած . պէտք  
 է սեւեղ Կնո՛ց քառաուրբները : Ո՞ր որ Կնոց  
 քառաուրբները սեւած է, բաւ մը չէ սեւած . պէտք  
 է սեւեղ Տղո՛ւն քառաուրբները : Աւելի յա-  
 ռաջ պիտի երթամ ես , բեղու համար ձե-  
 ղի . Ո՞ր որ Տղուն քառաուրբները սեւած է ,  
 բաւ մը չէ սեւած , պէտք է սեւեղ Հայ Որբու-  
 կի՛ն քառաուրբները » , անո՛ր որ յամիկ մըն  
 էր բուրեան ու դժնիկ դարձաւ յանկարծ ,  
 անո՛ր որ ազաւնեակ մըն էր ու եղաւ ազ-  
 աւաւ , անո՛ր որ եղնիկ մըն էր ու եղաւ թո-  
 ժիւն , անո՛ր—կըսեմ—որ տեսաւ թէ Բ՛նչպէս  
 իր հայրիկը սխալուի պէս ձիւրը դրաւ . դա-  
 նակին տակ , անո՛ր որ սահմուկած՝ դիտեց թէ  
 Բ՛նչպէս իր հօրը դիակն անկողին ծառա-  
 յեց՝ իր նոր-հարս քոյրը վրան պառկեցուց-  
 ուելու և յազուրդ տալու Ժանտարմաներու  
 գազանութեանց , անո՛ր որ աչքովը հետե-  
 ւեցաւ իր հրեշտակ քուրիկին երբ կը յափըշ-  
 տակուէր ան վրանաբնակ վայրենիներէ , յազա-  
 մանդի պէս արցունքները թարթիչներէն  
 կախ և ոտի հունչքով ձայնիկը հովերուն  
 յանձնած . ու մէ՛կը չիկար որ զինքը լսէր ,  
 ու մէ՛կը չիկար որ զինքը փրկէր : Աչքի  
 առջև բերէք անգամ մը Հայ Որբուկին  
 թշուառութիւնը , անո՛ր որ իր սիրական  
 մայրիկին ծնողներուն՝ օրերո՛վ քաշելէն  
 կ'իտարիլը տեսաւ և անօթի ծարաւ կենալէն  
 մոմի պէս ալ մարիլը , ապառաժի մը ստո-  
 բոսը ոտկուէ պարկ դարձած , անո՛ր որ  
 պիտիխն Հայութեան բոլոր կարաւաններուն  
 քաղաքայուիլը , կոտորուիլը , կոտորակուիլը  
 տեսաւ , և դրախն ստած՝ գնաց կորսուիլ

անհուն բացասաններու մէջ , ամալութեանց  
 գիրիկը , քարայրի ու շնագայլի կեանք մը վա-  
 բելու , Հայուն ու Տաճկին Աստուածները  
 երկինքներէն վա՛ր կանչելու և ազաւելու  
 Անո՞ր որ կա՛մ պատառ մը բան տար լրեն  
 ծամելիք , կամ հոգին առնէր ու ազատէր :  
 Արսահր . . . : Գժոխքին ամբողջ հեղնու-  
 թիւնը կայ պահուրած այս բառին մէջ .



Տարագիր Հայր՝ անպաշտին մէջ

ազատէր . կեանքի ո՞ր երջանկութեանը  
 հաշուոյն . . . :  
 Ի՞նչ է այսպսակ Հայ Որբուկին որուն  
 աշտրկները սեւակ մը «ֆօսաֆ» էին ետէր , այն  
 օրին ի վեր որ հոն ոմիրներ ու մի՛այն ոմիրներ  
 էին շուսակաւորներ :  
 Ի՞նչ խմոր ունի ուղեղը Հայ Որբուկին  
 ուր մինչեւ այսօր կը ցանգորդէն մօտաւոր  
 անցեալի մը դառնութիւնները բոլոր :  
 Աղէտէն ազատիլը , վերապրիլը՝ լուս-  
 չարունակութիւնն է հին տառապանքին ,

ուր վերքերը չեն բացուիր՝ բայց կը կտա-  
տան, ուր բերանը չազգազակեր՝ բայց կը  
հառաչէ :

Եթէ հարկ ըլլար երանի՛ կալ՛զալ  
անո՛նց որոնք հայ ազատագրութեան  
համար գացին ու չեկան, — մտաւորականէն  
բռնէ մինչև յետին մշակը ներքին գաւառ-  
ներուն, եկեղեցականէն բռնէ մինչև յետին  
խրեակը մեր քոյրերուն ու եղբայրներուն, —  
կրնա՞նք արդեօք երջանիկ յորջորջել զանոնք  
որ կարմիր ծովերէ լողալով անցան, և գրն-  
գալներու անձրեւէ հեւալով վախան, որոնք  
ունեցան վիշտի և անձկութեան նո՛յն սկըզ-  
բնաւորութիւնն ու շարունակութիւնը, բայց  
որ գարձան վերտալին, այսինքն սղջ պահե-  
ցին չոր գլուխնին :

Մեզի համար, ամէնուհաս համար, անձ-  
նիւր վերապրող՝ կենդանի պատմութիւնն է  
վերջին Հայ Մարտիրոսութեան զոր պար-  
տաւոր ենք թղթատելու, գոնէ երեւակա-  
յութեամբ ապրած ըլլալու համար ցաւազին  
կեանքը մեր եղբայրներուն ու քոյրերուն,  
գերեզմանէ ու տապանաքարէ զուրկ այդ  
եղերաբախտ էակներուն՝ որոնք իրենց մոր-  
մուրախ յիշատակը միայն թողուցին մեզի,  
վերապրող Հայերուս :

Այլ սակայն, այդ յիշատակին չտի նուիր-  
ական և անկէ՛ աւելի բարբառուն, աւելի  
կենտալից՝ նորէն ՄՆՐ ՈՐԻՆՐԸ կան, բաց  
զիրքի մը պէս առաջքնիս զրուած : Պէտք է  
կարգալ անոնց էջերուն (իմա՛ աչքերուն) մէջ  
ինչ որ կը պատմեն անոնք՝ իրենց անթարթ  
հայեցողութեամբ, ինչ որ մանաւանդ կ'ուզեն  
ու կ'ըզձան անոնք :

Մեր հայ որբանոցներուն մէջ հիմա խճող-

ուած, կեանքով ու զուարթութեամբ հա-  
ղիւ թէ բարախուն այդ էակները միայն հաց  
ու հազուստ չեն ուղեր մենէ : Տէրունական  
աղօթքնին՝ անգամ մուսոյդ, մերսպեան  
տաւերուն կարօ՞ւր քաջող այդ խրեակները՝  
իրենց մրտքին սնունդը կ'սպասեն մենէ :  
Փիղիքական խնամքին հետ համընթաց՝ ա-  
նոնք պէտք ունին դատարարութեան,  
մաքրուելու համար այն սեւութենէն՝ զոր  
թորանեան ազգը քսեց անոնց հողին :

Մայրիկի համքոյրներէ վաղուց զոկուած,  
սպասերովի անդունդին վրայ երերուն՝  
թշուառն'րու այդ բանակը՝ մրտքի սնուն-  
դէն յետոյ՝ պէտք ունի մանաւանդ իր հողիկ՝  
սնունդին որ մեր գուրգուրանքը պիտի ըլ-  
լայ և տաքութիւնը մեր բուխոխրտ խօսքե-  
րուն, որպէս զի անոր ցաւակած երեւակա-  
յութիւնը հանդարտի և իր խոցոտ սիրտը  
սպիանայ հետզհետէ :

Ոճիրի հաւասար բան մը պիտի ըլլար՝  
եչը երեմուն ուայինք թէ ըլրձուեր, այլա-  
կերպուէր էին իրենք : Հայու բերնէ զուրս  
ելած չեիս մը շատ ուժղին եղնգած պիտի ըլ-  
լար գոցուած վէրքերնին : Ո՞վ պիտի յան-  
զըզնէր մեղադրելու տատրակ մը որ իր ա-  
զաւնետունէն հանուելով ամխանոց էր նետ-  
ուեր և իր ձիւնի պէս թեւերը մնառած  
զուստ ելեր : Ո՞վ պիտի սիրտ ընէր զանելով  
նայելու իր պարտէզի շուշանին վրայ՝ զոր  
անդութ ձեւը մը փրցնելուն պէս՝ ցիխն էր  
ձգեր . . . :

Վախցէ՛ք Հայ Որբուկին դատատանէն

որ արդար զայրոյթով է թրծուած : Քան զի տեսայ անոնցմէ մին . Տ-Ս տարու աղւար մանչ մը , որդեգիր՝ լարեկեցիկ հայ խաթունի մը որ զայն գիրկը առած կ'ուզէր զբօսցնել՝ հէքեաթ մը պատմելով . «Մէկ կար՝ մէկը չիկար , մէկ... Աստուած - Պապա մը կար...» : Տղան աչքերը կը բանայ և շունչը կտրած՝ կ'ընդհատէ մօրուն . «Ուրի՛շ մատալ մը , մայրիկ , աս չեմ ուզեր , սուս մատալ չե՛մ ուզեր» կաղկանձելով :— «Ինչո՞ւ , տղաս» կը ձայնէ պառաւը :— «Աօված-Պապա մը ըլլար նէ վերը , թող կու տա՞ր որ իմ պապաս մորթուէր աչքերուս զէմը...» :

Ո՛վ դուք որ զերծ մնացիք հայահալած քաղաքականութեան սարսափներէն , ո՛վ դուք որ աքսորի ու սուրի արհաւիրքները չապրեցաք , ո՛վ դուք որ չգլտցաք թէ ի՞նչ բան է մէկ օրէն միւս՝ անտուն-անտէր մնալը , փափուկ անկողիններու փոխան՝ ցեխի ու փոշիի մէջ պառկիլը , մոռցե՛ք այսուհետև այն ճշմարտութիւնը որ կ'ըսէ . «Դիւրաւ չի կրնար մարդ կարեկցիլ այն ցաւերուն՝ զորս ինք չէ կրած» :

Ես ու դուն , ինք ու մենք չի մնաց այլ եւս : Զուլումը բոլոր Հայերս եղբայրացուց իրարու հետ :

Այդ անքակտելի սրտակցութեան անխար ապացոյցը առած կ'ըլլանք , երբ խօսքին հետ զօրծքերնի՛ս ալ խառնենք և նալինք Բախտէն այդ անժառանգներուն ա՛յն աչքով , որպէս թէ մեր ծոցածին զաւակներն ըլլային անոնք :

Զիկայ աւելի զէւրին լան մը՝ քան իր պարտքը կատարելը , ինչպէս որ չիկայ աւելի դժուար բան մը՝ քան այդ պարտքը ճանչնալը : Այդ դժուարութիւնն ալ վերցաւ արդէն՝ կաթիլին usխարստիսմոսքերն արջն :

Ազգային ինամատարութիւնը կը շարունակէ եղեր՛րդել զատարկութիւնն իր դրամարկին , ու մեր սիրտերը կը խշխշան՝ աչքի անչև բերելով ստուար լեզէտնը մեր անպաշտպան սրբերուն :

Կը հաւատամ , ագնիւ Հայրենակիցներ , որ դուք ամէնքդ ալ չէք պատկա՛նիր մոտածողներու այն դատակարգին որ կ'ենթադրէ թէ երջանկութիւնը կը կայանայ շո՛տ ունենալուն մէջ :

Ա՛հ , երջանկութիւնը , մեր սիրտերու ածուին մէջ ա՛յնքան նազանքով ծլոյ այդ մոգական և զգայնիկ ծաղիկը . երջանկութիւնը—ծերին ու երիտասարդին երազներուն այդ ասանցքը—կը կայանայ չէ՛ թէ շատ ունենալուն մէջ , երբե՛ք , այլ շա՛տ սիրելուն մէջ , բայց մանաւանդ իր նմանը , իր թշուառ ազգակի՛ցը սիրելուն մէջ : Եւ ո՛վ արժանի՛ այնքան շատ սիրուելու , ա՛յնքան շատ սուարկայ դառնալու մեր հոգածութեան՝ մեր սրբերէն ՚ի զատ ,անո՛նց որ հիմակունէ կը խորհին թէ կաղանդ ու Ծ՛նունդ կը մօտիկնան կտր , հանուր աշխարհի այդ օրերը ցնծութեան , և իրենք ո՛չ ոք և ոչի՛նչ ունին իրենց շուրջ , բաց ՚ի , թիրեւս , սովահար ըլլալու հեռապատկերէն :

Մարդ կը ստեղծէ կրր մտածէ թէ կան

անասիկ թշուառութիւններ որոնց հանդէպ՝  
իր երջանիկ ընտանիք ուրիշ բան չէ եթէ ոչ  
ամօթ մը: Եւ այդ թշուառութիւններէն  
ամէն մէկը, — հիմա նորէն մկրտած Հայ-  
կուհիներ, Անուշաւաններ, Գեղամներ, Ար-  
շալոյցներ, Պայծառներ ու Հրաչեաներ —  
էին առեւտր բարեմոյն զաւակները ընչեղ  
ծնողաց, տէր՝ աղարանքի պէս տուներու,  
արտերու եւ այգիներու, ու թուշունին կաթին  
անպահանս էր իրենց համար: — Սերունդն  
ենք և մենք Արամներու և Թորգոմներու  
այն մեծ ազգին՝ որ կուրծք տուաւ դարե-  
րու անվերջ փոթորիկներուն, որ ազգայ-  
նութեան գաղափարին կառչած մնաց իր  
լեզուով ու կրօնքով և որ գիտցաւ ամէն  
բանէ առաջ մտնուիլ քայտած տիրելու, իր ույ-  
ցերը հոգարու եւ ձեռք երկաւորու հասնուր քրչ-  
ուառութեան ճանճաղութիւն մեզ իրած իր ազ-  
գակիցներուն, Կալիաթայէն մինչեւ Նախիջու-  
լան, Կովկասէն մինչեւ Նոր Աշխարհ, Պարս-  
կաստանէն մինչեւ Բիւզանդիոն, ամէն Հայ  
գութի մի՛եւնոյն զգացումովը տողարուն:

Հաւատացողներէն եմ ես թէ Մեծ Աղէա-  
ներէն երբեմն մեծ ազգերը կը վերածնին,  
միութենական այն շարժումով սակայն որ  
գիտակցութիւնն ի՛նչ է իրերոյնութեան: Մեր  
վիշաք խորունկ է անդունդի մը չափ. գայն  
գոցելու համար նոր վիշակեր ունենալ՝ սխալ  
զաղափար է ատիկա. պէտք է ին անդուն-  
դը լեցնել գիտնանք՝ ցրուած ոյժերնիս  
խմբելով մեր շուրջ:

Մտանալոյցի Հայր նուազագոյն չափով



Մեծ Եղեւնցիները Վերայտու խմբակներ

վերցուց տառապանքի իր բերը՝ պատերազմի ընթացքին։ Ունեցաւ պատահական կորուստներ միայն իր շարքերէն և ինչ ինչ վրուզումներ՝ իր դիրքերէն։ Զանգուածային բնաջնջումը որ դրոնցի Հայուն սեւ ճակատադիրը եղաւ՝ անձանօթ մնաց իրեն, և ձենէ չատեր, հոս, մնացին անհազորք՝ անոնց մահազին տաղնապներուն։

Ալ ատեն է որ բախտաւոր Պօլտահայր թօթվէ իր վրայէն անտարբերութեան փուշին և ջրէ իր երջանկութեան թաղարները մեր որբերուն արցունքով, տենեելու համար թէ ինչ աղւոր ծաղիկներ պիտի բացուին անոնց մէջ։ Յեղին վերածնունդն է որ պիտի ըսկրուած ըլլայ, կըր անտերունչ նոր սերունդը փրկել ջանաւք և առաջնորդենք զէպ ի լոյս, զէպ ինքնադիտակցութիւն։

Այդ քայլն ասնելու համար, զիտեմ, պէտք է յանձնառու ըլլալ ինչ ինչ գոհողութեանց, բայց ոչ ասպարէն նշխարսպիս բարի գործերն անու՛նք ևն որ ինչ մը սուղի կը կուտին գործողին։

Ամէն ազգերու ծանօթ Աւետարանն է ըսողը թէ՛ «ազքատին սղորմողը փոխ տուած կ'ըլլայ Աստուծոյ»։ Ես, դուն, ան, ամէնքնիս մէ՛կ բերան կը յորդի՛նք սոյն նշխարսոյրեանց ևրի սայխոս՝ ըսելով ևնոր որբերո՛ր նսակընակի։ Հայ որբերուն սղորմիրը՝ նախատի՛նք մըն է, նետուած Հայ Ազգին երեսին։ Պարսիք պիտի չի շիրոքեց Ենտրիկն ևն...։

Պէտք է հոգեգաւակ ընենք զանոնք և զաղբի՛նք՝ անոնց սալէ որբ անունը որ յաւի-

տենական սեւ պիտակի մը պէս փակցուցեր ենք անոնց զազփազփուն դոյութեան։ Աստուծ կը որ սուս անոնց ճնորհներն ու պաշտպանները։ Ոճրապարտ ինչ խնաս կայ բունի որբարիւն ասութեան մէջ՝ զոր տակաւին չէ կրցած լուծել սա իմ ցաւակոծ դատողութիւնս։

Եւ տիեզերքիս վրայ, սա կապոյտ երկինքին տակ, չիկայ էակ մը՝ ա՛յնքան լայնօրէն ապրելու իր իրաւունքին մէջ, որքան Բընապետութեան լախտովը որբացած դաւասի հայ մանուկը՝ որ այսօր մեր շուրջն է։

Ահա՛, ազնիւ <sup>\*\*\*</sup> Հայրենակիցներ, ես աւարտեցի ըսելիքներս, գուցէ չարաչա՛ր իսկ գործածելով ձեր ունկնդրութիւնը, սրովհետեւ գուարթ չէի ընտրած իմ նիւթս և աղէապալի անցեալին ծաղքերը քիչ մը էւելո՛ք վեր էի աւած։ Բայց Եունկ, անգլխացի մեծանուն իմաստասէրը, կ'ըսէ. «իւելացութիւն է անցեալ ժամերը հարցափորձել, անոնց պատասխանը պիտի կազմէ ա՛յն՝ ինչ որ մենք փորձառութիւն կը կոչենք»։

Արդ, անցեալը վերյուզելով՝ իմ պըղտիկ փորձառութիւնս ինձ կ'ըսէ. — Հայութիւնը նորէ՛ն պիտի շատնայ, ծլի ու ծաղկի՛ եթէ փրկենք մեր որբերը։ Պէտք է գուրգուրալ, ի դին ամէն գոհողութեանց, մեր որբերուն վրայ։ Անո՛նք են որ պիտի կազմեն ապագայ Հայութիւնը։ Վերադարցուցէ՛ք անոնց՝ երբեմնի աշխոյժն իրենց մարմինին ու միտքին, ներշնչեցէ՛ք անոնց՝ զիտակցութիւնն իրենց կորուսած ամօթխածութեան, սորվե-

յուզէ՛ք անոնց՝ կոյր հնազանդութենէն աւելի՝ սէրը ժուժկալ ու գիտակից ազատութեան ,  
և կոչեցէք զիրենք որչափ՝ փոխան որբուկի :

Վասն զի , Հայրենակիցներ՝ , այդ նշխարները գեհեհններու մէջ իբրեւ ամուսն հետուեցան՝ ազամանդ դուրս դալու համար :  
Մի՛ թողուք որ պատուական ամուսնը դառնայ մոխիր չպիտու . . . :

Թ. Լ. Բ. Ե. Կ.





**Ա.գգ. Արեւմտական Յանձնաժողովին  
կնիւն չկրող օրինակները անվաւեր են:**

**ԳԻՆ՝ 25 ՂՐԸ.**